ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

5 ապրիլի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

49
(2715)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԽՈՒԼԻԳԱՆԱԿԱՆ ՊԱՀՎԱԾՔԸ

Երեկ Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նիստն անցավ շատ լարված մթնոլորտում, որի հեղինակները Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներն էին եւ հատկապես Արթուր Հովհաննիսյանը: Իսկ ո՞վ է նա եւ ինչպե՞ս երեկ աչքի ընկավ: Խոսքը նույն այն պատգամավորի մասին է, որ 2017 թվականին բերման է ենթարկվել ոստիկանություն՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված ենթադրյալ հանցանք կատարելու կասկածանքով: Ավելին՝ անգամ քրեական գործ է հարուցված եղել, որը հետագայում կարճվել է: Եվ, ահա, ապօրինի թմրաշրջանառության հետ կապված գործի շրջանակներում ոստիկանություն տարված Արթուր Հովհաննիսյանը երեկ նիստում խուլիգանական պահվածք դրսեւորեց, խոսեց սպառնալից կերպով, եւ սխալված չենք լինի, եթե ասենք, որ նա հանձնաժողով էր առաքվել հենց այդ նպատակով: Ահա մի քանի դրվագներ. «Դուք ինձ լավ անելուց չեք տեսել», «Սրան ռադ արեք, թող գնա ստեղից», «Համը չհանես, խելոք նստի, ելույթդ կարդա», «Լեզուն կկտրեմ, ով կհամարձակվի անվանարկել մեր ժողովրդին»: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ նրա այս պահվածը հիշեցնում է, օրինակ, նախկին պատգամավոր Առաքել Մովսիսյանին, Վարդան Այվազյանին, Ռուբեն Հայրապետյանին, Մանվել Գրիգորյանին եւ մյուսներին, որոնց ժամանակին քննադատում էր նաեւ լրագրող Արթուր Հովհաննիսյանը, որն իր հերթին նոր անդաստիարակություն է դրսեւորել, եւ այս փաստը պետք է անհետեւանք չմնա:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ երեկ ԱԺ-ում ձեւավորված 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողով էր այցելել ՀՀ արտաքին գործերի նախկին նախարար Զոհրաբ Մնացականյանը: Մենք տեղեկացանք, որ նա Ազգային ժողովում է եղել ժամը 11-ից, եւ նիստը տեւել է մինչեւ 16:00-ն: Մենք տեղեկացանք, որ նրան պատգամավորները տարբեր հարցեր են ուղղել, թե որպես դիվանագիտություն նախկիններից ինչ է ստացած եղել, եւ արդյոք դիվանագիտության մեջ եղել են այնպիսի սխալներ, որոնք կարող էին ունենալ վատ հետեւանքներ: Հարց է հնչել՝ արտաքին դիվանագիտության ոլորտում արդյոք ինչ բացթողումներ կամ քայլեր են եղել, որոնք կարող էին նպաստել պատերազմին: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ արդեն ամեն շաբաթ այս հանձնաժողովը նոր մարդկանց է կանչելու տարբեր հարցադրումներ անելու համար, այսինքն՝ ինտենսիվ փուլ է սկսվել, եւ ցանկանում են շաբաթը գոնե երկու մարդ հրավիրել հանձնաժողով, որպեսզի ցանկալի արդյունքի հասնեն:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության միջնորդության հիման վրա՝ Հակակոռուպցիոն դատարանը երկու ամսով երկարացրել է գործարար Դավիթ Գալստյանի՝ Պատրոն Դավոյի կալանքի ժամկետը: Նշենք, որ ԱԱԾ-Ն նրան կալանավորել է հունվարի 23-ին ԱԱԾ-ում քննվող քրեական գործի շրջանակներում: Դավիթ Գալստյանը մեղադրյալի կարգավիճակ ունի նաեւ ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանի քրեական վարույթի շրջանակներում՝ անպիտան հրթիռների գործով, որն արդեն քննվում է Հակակոռուպցիոն դատարանում: Քրեական գործի շրջանակներում մեղադրանք է առաջադրվել յոթ անձի, այդ թվում՝ ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանին, ՀՀ ՋՈՒ ԳՇ պետ Արտակ Դավթյանին, ՋՈՒ ԳՇ պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ապրիլի 11-ին Երեւանի քաղաքապետարանում կայանալիք արտահերթ նիստն իրականում տեղի չի ունենա: Խոսքն այն նիստի մասին է, որտեղ, իբր թե, պետք է ընտրեին Երեւանի նոր քաղաքապետին: Ավագանու «Իմ քայլը» խմբակցությունը որոշել է գնալ այլ ճանապարհով: Մեր տեղեկություններով՝ որոշում է առկա, որ ավագանու անդամները չեն գնա, չեն գրանցվի նիստին եւ, հետեւաբար, նաեւ քվորում չեն ապահովի: Այդ նիստի ժամանակ Լեւոն Հովհաննիսյանը, որը հիմա կատարում է քաղաքապետի պարտականությունները եւ նախագահում նաեւ ավագանու նիստերը, կհայտարարի քվորման բացակայության մասին, եւ ընտրությունները կչեղարկվեն: Արդյունքում կունենանք մի իրավիճակ, երբ Լեւոն Հովհաննիսյանը կմնա ու կղեկավարի այնքան ժամանակ, մինչեւ տեղի կունենան Երեւանի ավագանու հերթական նիստերը: ՔՊ-ամերձ մեր աղբյուրներն ասում են, որ այս պահի դրությամբ իշխանական վերնախավում որոշված է, որ այդ ընտրություններն արտահերթ կերպով չեն լինի, այլ կօգտագործեն այս ընթացքում առկա ժամանակը, որպեսզի լավ աշխատեն եւ սեպտեմբերին կարողանան մասնակցել ընտրություններին՝ Տիգրան Ավինյանի դեմքով: Սա է իշխանությունների այս պահի ծրագիրը:

«ԴԱՎԱՃԱՆ»

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ՀՈՒՇՈՒՄ Է

Վերջերս Երեւանի կենտրոնում՝ Կասկադում, աղմկահարույց միջադեպ էր տեղի ունեցել ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի մասնակցությամբ:

Հայրենադարձ Կարեն Մկրտչյանը, տեսնելով Ալեն Սիմոնյանին, ասել է՝ դավաճան, որից հետո Ալեն Սիմոնյանն իր թիկնապահներին կարգադրել է գալ եւ բռնել քաղաքացու ձեռքերը: Թիկնապահները կատարել են Ալեն Սիմոնյանի հրահանգը, իսկ վերջինս մոտեցել է քաղաքացուն, հայհոյհանք հնչեցրել եւ, բառի ուղիղ իմաստով, թքել է քաղաքացու վրա:

ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը երեկ արձագանքել է Ալեն Սիմոնյանի մասնակցությամբ տեղի ունեցած այս միջադեպին ու իր գրառումը «Ազգային խայտառակություն» վերնագրել:

Առաջին նախագահը նշել է, որ ՔՊ-ն պարտավոր է նախաձեռնել Ալեն Սիմոնյանի պաշտոնանկության հարցը:

«Ժողովուրդ» օրաթերթը այս հարցի շուրջ զրուցել է ՔՊ խմբակցության պատգամավոր Վիգեն Խաչատրյանի հետ:

-Պարոն Խաչատրյան, քաղաքացին վերջերս ահազանգեց, որ ԱԺ նախագահը հայհոյել է իրեն ու թքել իր վրա. ի՞նչպես կգնահատեք ԱԺ նախագահի վարքագիծը, ընդունելի համարո՞ւմ եք այն:

-Այն քաղաքացուն, որի մասին խոսում եք, ես նրա ոչ մի ասածին չեմ հավատում, բայց որ չի կարելի մարդուն վիրավորել կամ կոպտել, դա հաստատ է:

-Առաջին նախագահն ասում է, որ իշխող ֆրակցիան պետք է Ալեն Սիմոնյանի պաշտոնանկության հարց բարձրացնի. ի՞նչ կասեք այս մասին, հնարավո՞ր է՝ նման հարց բարձրացնեք:

-ԱԺ նախագահի պաշտոնը քաղաքական պաշտոն է, Ալեն Սիմոնյանը ներկայացնում է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը: Կարծում եմ, որ կուսակցության ղեկավար մարմինը պետք է այս հարցը քննարկի: Այս առումով Լեւոն Տեր-Պետրոսյանի հոդվածը դիտարկում եմ որպես հուշում. կարծում եմ՝ արժի, որ նրա առաջարկը քննարկվի խմբակցության բարձրագույն մարմնում:

Պետք է քննարկվի, ու անհրաժեշտ պատասխաններ տրվեն: Պատգամավորները, ԱԺ նախագահը, կուսակցության ղեկավարները պետք է ընդունեն, որ հանրային ֆիգուրներ են, եւ նրանց գործունեությունը պետք է լինի հանրության խոշորացույցի տակ, ցանկացած սխալ պետք է մատնանշվի. սա նորմալ է: Եթե մենք ուզում ենք, որ մեր հանրության ներսում համերաշխություն տիրի, իսկ մենք դա ուզում ենք, պետք է կողմնապահություն չանենք եւ բոլորի սխալները շեշտենք:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՀԱԿԱՔԱՐՈՂՉՈՒԹՅՈՒՆ՝ ԸՆԴԴԵՄ ԱԺ ՆԱԽԱԳԱՀԻ

ՔՊ-ում կրկին արշալույսները խաղաղ չեն:

Այս անգամ էլ ՔՊ-ականների թիրախում ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն է:

«Ժողովուրդ» օրաթերթի հավաստի տեղեկություններով՝ Հայկ Կոնջորյանը, Արթուր Հովհաննիսյանն ու Անդրանիկ Քոչարյանը «կոալիցիա» են կազմել ու ակտիվ հակաքարոզչություն են տանում՝ ընդդեմ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի:

Վերջինիս մասնակցությամբ Կասկադում տեղի ունեցած աղմկահարույց միջադեպն էլ իսկական առիթ է դարձել նրանց համար:

Նրանք օգտագործում են նաեւ այս միջադեպը՝ ՔՊ ներսում Ալեն Սիմոնյանի դեմ տրամադրություններ հրահրելու, պատգամավորներին ընդդեմ Սիմոնյանի տրամադրելու համար, որպեսզի պաշտոնանկության պրոցես սկսեն:

ՔՊ կոալիցիոն այս եռյակը հարմար առիթներ է փնտրում նաեւ Նիկոլ Փաշինյանի ականջին Ալեն Սիմոնյանի մասին տեղեկություններ հասցնելու համար: Մինչ այս պահը դեռ Փաշինյանին չեն կարողացել տրամադրել Ալեն Սիմոնյանի դեմ, բայց ամեն ինչ դեռ առջեւում է: Հիշեցնենք, որ ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, երեկ արձագանքելով ԱԺ նախագահի պահվածքին, ՔՊ-ին հորդորել էր Ալեն Սիմոնյանի պաշտոնանկության հարց բարձրացնել: ՔՊ խմբակցության պատգամավոր Վիգեն Խաչատրյանը երեկ «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասել էր, որ խմբակցության բարձրագույն մարմնում պետք է քննարկվի Ալեն Սիմոնյանի հարցը: Արդյոք ՔՊ-ն կգնա այս քայլին, թե ոչ՝ ժամանակը ցույց կտա: Հավելենք, որ ՔՊ ներսում ոչ պակաս ակտիվ է նաեւ Ալեն Սիմոնյանի կողմնակիցների թեւը, որոնք ամեն հարցում պաշտպանում են վերջինիս:

ԴԻՄՈՒՄ

ԱՄՆ ՀԱՏՈՒԿ ՄԱՆԴԱՏԱԿԻՐՆԵՐԻ ԿՈՉԸ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

Ապրիլի 3-ին հրապարակվել է Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների հատուկ ընթացակարգերի հինգ մանդատակիրների կողմից Ադրբեջանի կառավարությանն ուղղված դիմումը, որում կոչ է արվում անհապաղ քայլեր ձեռնարկել՝ աղահովելու համար Լաչինի միջանցքով տեղաշարժի ազատությունն ու անվտանգությունը:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների փորձագետները, մասնավորապես, նշում են, որ Լաչինի միջանցքը միակ ուղին է, որը կապում է Լեռնային Ղարաբաղը Հայաստանի եւ արտաքին աշխարհի հետ, եւ ունի խոշոր հումանիտար նշանակություն: Շրջափակումը խափանել է պարենի, դեղորայքի, վառելիքի եւ այլ կենսական ապրանքների առաքումը Լեռնային Ղարաբաղի շուրջ 120.000 բնակչությանը: Հումանիտար իրավիճակը վատթարացել է գազի մատակարարման պարբերական ընդհատումներով, ինչը խաթարել է բժշկական հաստատությունների աշխատանքը, փակվել են կրթական հաստատությունները:

Հատուկ մանդատակիրները խիստ մտահոգություն են արտահայտում, որ Լեռնային Ղարաբաղը արտաքին աշխարհին կապող միակ ճանապարհի շարունակական արգելափակումը կարող է ծանր հումանիտար հետեւանքներ ունենալ բնակչության համար եւ խախտել նրանց իրավունքները:

Հաղորդագրությունն ուղարկվել է ՄԱԿ-ի Պարենի իրավունքի հարցով հատուկ զեկուցողի, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով հատուկ զեկուցողի, Կրթության իրավունքի հարցով հատուկ զեկուցողի, Ֆիզիկական եւ հոգեկան առողջության ամենաբարձր հասանելի չափանիշներից օգտվելու իրավունքի հարցով հատուկ զեկուցողի եւ Տարեցների կողմից մարդու բոլոր իրավունքներից օգտվելու հարցով անկախ փորձագետի անունից:

ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ



Խախտելով տեւական լռությունը՝ Հայաստանի առաջին նախագահն «ազգային խայտառակություն» է որակում նախօրեին ԱԺ նախագահի շուրջ տեղի ունեցած, իր բնորոշմամբ, զազրելի միջադեպը՝ իշխող քաղաքական ուժին առաջարկելով նախաձեռնել Ալեն Սիմոնյանի պաշտոնանկության հարցը: Լեւոն Տեր-Պետրոսյանի հայտարարությունը հրապարակել է ilur.am-ը:

Առաջին նախագահին զայրացրել է անցած կիրակի մայրաքաղաքի կենտրոնում Սիմոնյանի եւ դաշնակցական սփյուռքահայ Կարեն Մկրտչյանի միջեւ տեղի ունեցած միջադեպը: Դաշնակցական երիտասարդը Սիմոնյանին անվանել էր դավաճան, ինչից հետո, ըստ նրա, Սիմոնյանի թիկնապահները ոլորել էին իր ձեռքերը, իսկ ԱԺ նախագահը թքել էր իր դեմքին: Ալեն Սիմոնյանը, ըստ էության, չէր հերքել կատարվածը, բայց երեկ այդպես էլ չէր պատասխանել հարցին՝ ի վերջո, թքել է քաղաքացու դեմքին, թե ոչ: Ավելին՝ արդարացրել էր իր թիկնապահների՝ քաղաքացուն մոտենալու, ձեռքերից բռնելու գործողությունները. «Մեր խոսակցությունից հետո ինքը փորձ արեց հարձակվի ինձ վրա, որից հետո անվտանգության աշխատակիցները նրան բռնեցին, որպեսզի ինքը չհարձակվի իմ վրա, եւ նույնիսկ իր հրապարակած տեսանյութում կամ որեւիցե տեղ նման բան գոյություն չունի: Մենք էսօր ընենց աշխարհում ենք ապրում, որ որեւիցե բան թաքցնել անհնար է: Ինչ վերաբերում է մնացածին, կարծում եմ՝ բոլոր պատասխանները իմ հրապարակման մեջ կան»:

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԿԸՆՏՐԵՆ

Երեւանի ավագանին ապրիլի 11-ին քաղաքապետի արտահերթ ու ըստ էության ձեւական ընտրություն կանցկացնի օրենքի պահանջին հետեւելու համար: Նման անհրաժեշտություն առաջացել է նախկին քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի հրաժարականից հետո: Ավագանին արտահերթի համար ամենաուշը մեկ ամիս ժամանակ ունի: Այսօրվա նիստը վարող Երեւանի առաջին փոխքաղաքապետ Լեւոն Հարությունյանը, որ հիմա քաղաքապետի պարտականություններն է կատարում, հայտարարեց. «Առաջարկում եմ Երեւանի քաղաքապետի արտահերթ ընտրության օրը սահմանել 2023 թվականի ապրիլի 11-ը՝ ժամը 10:00-ն»: Այսպիսով, ապրիլի 11-ին ավագանու խմբակցությունները պետք է իրենց թեկնածուներին առաջադրեն, բայց օրենքը պարտադրում է, որ այդ թեկնածուն ավագանու անդամ լինի:

ՆԻՍՏ

ՔՊ-ԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովում երեկ Մարդու իրավունքների պաշտպանի թեկնածուների քննարկման հարցն էր, որը վերածվեց լեզվակռվի: Առաջին հարցը ընդդիմության թեկնածուին էր վերաբերում: Էդգար Ղազարյանին առաջադրել են «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունները: Ղազարյանը ՍԴ աշխատակազմի նախկին ղեկավարն է եղել, Լեհաստանում ՀՀ նախկին դեսպանը: Իշխանական պատգամավորները ընդհատեցին նրա ելույթը, նրա որակումներից բորբոքվեցին, ու սկսվեց թեժ լեզվակռիվ: «Էս ո՞ւմ եք բերել Ազգային ժողով, սա խայտառակություն է: Էս ում են բերել եւ ծաղրում են մարդու իրավունքները մեր երկրում «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունները», - նեստեցին իշխանական պատգամավորները:

Նրան նաեւ խեղկատակ, ծաղրածու անվանեցին: ՄԻՊ-ի թեկնածուն իրավունք չուներ նույնիսկ ելույթը շարունակելու. իշխանականները դուրս եկան դահլիճից: «Չեմ արձագանքում միայն այն պատճառով, որ դրանք ոչ միայն քննարկման, այլեւ ուշադրության արժանի չեն առհասարակ», - արդեն լրագրողների հետ զրույցում ասաց Էդգար Ղազարյանը:

Օմբուդսմենի թեկնածուների հարցի քննարկման երկրորդ հատվածում արդեն ներկայացվեց իշխանական թեկնածուն՝ գլխավոր դատախազի տեղակալ Անահիտ Մանասյանը: Քննարկումն այս փուլում խաղաղ անցավ, նրան ընդհատող չկար: Իշխանական պատգամավորները նրան տարբեր հարցեր տվեցին, նաեւ թե ինչպիսի դիրքորոշում ունի այն քաղաքացիների նկատմամբ, որոնք բողոքում են իշխանությունից, կառավարությունից, պատրա՞ստ է ընթացք տալ նրանց բողոքներին: Անահիտ Մանասյանն ասաց, որ պաշտպանելու է քաղաքացիներին՝ անկախ նրանց քաղաքական հայացքներից: Ընդդիմադիր պատգամավորները չէին մասնակցում այս նիստին, միայն հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանն էր ներկա: Նիստի ավարտին հանձնաժողովը Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնում հավանություն տվեց իշխող Անահիտ Մանասյանի թեկնածությանը: Նրա օգտին քվեարկեցին ՔՊ-ական պատգամավորները: Ընդդիմադիր «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունների առաջադրած միասնական թեկնածուի օգտին կողմ քվեարկեց միայն Թագուհի Թովմասյանը: Դատախազի տեղակալ Անահիտ Մանասյանի թեկնածության հարցը կքննարկվի խորհրդարանի լիագումար նիստում: Անահիտ Մանասյանը ՄԻՊ պաշտոնում ընտրվելու դեպքում իր առաջնահերթ աշխատանքն է համարում հանրային հանդուրժողականության մթնոլորտի ձեւավորումն ու դրան նպաստելը: «Կարծում եմ, որ իմ առաջնահերթ նպատակը, նաեւ ամբողջ աշխատանքային համատեքստը, որ պատկերացնում եմ Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնում, հենց հանրային հանդուրժողականության մթնոլորտի ձեւավորումն ու դրան նպաստելն է»,-ասաց թեկնածուն: Նա համոզված է, որ, առանց նման մթնոլորտի, անհնար է ուղղակի ունենալ մարդու իրավունքների պաշտպանության գործիքակազմ:

«Ակնհայտ է, որ մենք ունենք լուրջ խնդիրներ: Եվ այն մեծ խնդիրները, որոնք օբյեկտիվորեն տեսնում ենք, բոլորը բխում են այդ հիմնական խնդիրներից, հետեւաբար իմ հիմնական առաքելությանը նպաստող ամենամեծ գործիքակազմը լինելու է հենց հանրային հանդուրժողականության մթնոլորտի ձեւավորումը, որովհետեւ հենց այս հանգամանքն է ընկած մարդու իրավունքների պաշտպանության մնացյալ բոլոր խնդիրների հիմքում»,-ասաց Մանասյանը: Նա ընդգծեց՝ ՄԻՊ գործառույթը չի տեսնում պարզապես ինչ-որ խնդիրներ արձանագրելու եւ դրա մասին հայտարարություններ հրապարակելու համատեքստում: «Բոլորիս տեսանկյունից պետք է կարեւոր լինի արձանագրված խնդիրների համար հարգանքի, համագործակցության ոլորտում լուծումներ գտնելը»,-նշեց թեկնածուն: Մանասյանը շեշտեց՝ Մարդու իրավունքների պաշտպանի դերակատարությունն ու կերպարը չի տեսնում ընդդիմադիր, իշխանական քաղաքական գործչի համատեքստում:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԼԻՏՎԱՆ ԿՈՂՄ Է ՔՎԵԱՐԿԵԼ

Լիտվայի խորհրդարանը կողմ է քվեարկել Ռուսաստանի քաղաքացիներին երկրում անշարժ գույք ձեռք բերելն արգելելու նախաձեռնությանը:

Արգելքին կողմ է քվեարկել 76 պատգամավոր, դեմ է արտահայտվել 13-ը, եւս 34-ը ձեռնպահ է մնացել: Նախաձեռնության հեղինակն է Սեյմի ազգային անվտանգության եւ պաշտպանության հանձնաժողովը: Ըստ հանձնաժողովի նախագահ Լաուրինաս Կասչյունասի՝ 2022թ.-ին ռուսաստանցիները Լիտվայում ձեռք են բերել անշարժ գույքի 699 օբյեկտ:

Հանձնաժողովում վստահ են, որ ռուսաստանցիների կողմից անշարժ գույքի ավելի ակտիվ ձեռք բերումը կարող է վտանգներ ստեղծել ազգային անվտանգության համար: Նշվում է, որ Ուկրաինայում Ռուսաստանի ծավալած ռազմական գործողություններից հետո Լիտվա ժամանող ռուսաստանցիների թիվը զգալիորեն աճել է:

ԱՆՀԻՄՆ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ

Ադրբեջանում շարունակում են հնչեցնել անհիմն մեղադրանքներ Հայաստանի հասցեին: Այս անգամ, իբր, Հայաստանը «հրաժարվում է համագործակցել ականազերծման հարցում»:

«Այսօր նշվում է Ականների վտանգի հարցերով կրթման միջազգային օրը: Նրանք, ովքեր անկանոն ականներ են տեղադրում եւ հրաժարվում համագործակցել դրանց վնասազերծման հարցում, այդ թվում՝ Հայաստանը, պետք է ենթարկվեն պատասխանատվության: Մենք պետք է վերջ դնենք մարդկային մեծ կորուստներին այդ արարքների հետեւանքով»,- նշվել է Ադրբեջանի ՆԳՆ-ի թվիթերյան հրապարակման մեջ՝ Ականների վտանգի հարցերով կրթման միջազգային օրվա առիթով:

Հիշեցնենք, որ Բաքվում այդկերպ «արդարացնում» են գերիներին չվերադարձնելը եւ այլ հանցագործություններ, այնինչ գոյություն ունեցող ականային վտանգն Արցախում եւ Հայաստանի եւ Ադրբեջանի սահմաններին ստեղծվել է հավասար չափով հենց Ադրբեջանի կողմից, էլ չենք ասում այն մասին, որ հակամարտությունն ինքը Արցախի եւ Հայաստանի դեմ Ադրբեջանի իշխանությունների ագրեսիվ քաղաքականության հետեւանքն է: Ինչպես առաջին պատերազմի ժամանակ, այնպես էլ ավելի ուշ Ադրբեջանի ԶՈՒ-ն ստեղծել է ականադաշտեր, իսկ հիմա պատասխանատվությունը դնում է հայկական կողմի վրա:

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

ՄԵՂԱԴՐՎՈՂ ԱՆՁԸ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

Արդեն տեղեկացվել է, որ ՀՀ ոստիկանության կոմիտեի Կոտայքի մարզային ոստիկանության վարչության Աբովյանի բաժնում իրականացված ոստիկանությամբ պարզվել են 2023թ. մարտի 1-ին Ջրվեժ համայնքում տեղի ունեցած սպանության դեպքի էական հանգամանքներ:

Դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությամբ պարզվել է, որ մարտի 1-ին՝ ժամը 21:20-ի սահմաններում, Երեւան քաղաքի բնակիչ 34-ամյա տղամարդը ինքնությունները չպարզված անձանց հետ միասին Ջրվեժ համայնքում գործող խանութի դիմաց վիճաբանության մեջ է մտել Ջրվեժ համայնքի 49-ամյա բնակչի, վերջինիս որդու եւ մի քանի այլ անձանց հետ տաղավարի հողատարածքի ձեւափոխման հարցի շուրջ: Անձինք սկսել են ձեռքերով ու ոտքերով հարվածներ հասցնել միմյանց, որի ժամանակ Ջրվեժ համայնքի 49-ամյա բնակիչը վայր է ընկել, իսկ 34-ամյա տղամարդը քննությամբ դեռեւս չպարզված հանգամանքներում ձեռք բերած եւ իր մոտ պահվող հրազենից կրակոց է արձակել Ջրվեժ համայնքի 49-ամյա բնակչի գլխի ուղղությամբ՝ պատճառելով կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածք: Իր հետ դեպքի վայր եկած անձանց հետ նա դիմել էր փախուստի:

Երեւան քաղաքի 34-ամյա բնակչի նկատմամբ հարուցվել էր հանրային քրեական հետապնդում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով եւ 335-րդ հոդվածի 1-ին մասով: Հաշվի առնելով, որ նրա գտնվելու վայրը հայտնի չէ՝ հանձնարարություն էր տրվել ոստիկանությանը նրան ներկայացնել վարույթն իրականացնող մարմնին, եւ անձի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը:

Շարունակվող նախաքննության ընթացքում Ոստիկանության հետ համատեղ կատարված աշխատանքի արդյունքում քրեական հետապնդման ենթարկվող անձը ներկայացել է վարույթն իրականացնող մարմնին, ում ներկայացվել է մեղադրանք:

Հայտնաբերվել է նաեւ հանցագործության գործիք հանդիսացող ատրճանակը:

Դատարան միջնորդություն է ներկայացվել Երեւան քաղաքի 34-ամյա բնակչի նկատմամբ խափանման միջոց կալանք կիրառելու հարցը վերստին քննարկելու վերաբերյալ, որը բավարարվել է, եւ անձը տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ:

Նախաքննությունը շարունակվում է, ձեռնարկվում են բոլոր միջոցները՝ միջադեպին մասնակից մյուս անձանց ինքնությունները պարզելու, վերջիններիս հայտնաբերելու ուղղությամբ:

ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐՈՎ 5 ՄԼՆ ԴՐԱՄ Է ՊԱՀԱՆՋԵԼ

Ավարտվել է Չարենցավան քաղաքի բնակչից խոշոր չափերով շորթում կատարելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

2022 թվականի դեկտեմբերի 2-ին հիշյալ քաղաքացին հաղորդում էր ներկայացրել Հայաստանի Հանրապետության ԱԱԾ, որի հիման վրա ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունն իրականացվել է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչությունում:

Կատարված քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներով հիմնավորվել է, որ 2022թ. նոյեմբերի 26-ին՝ ժամը 10:00-ից 12:00-ն ընկած ժամանակահատվածում, Չարենցավան քաղաքի հիշյալ բնակիչը նույն քաղաքի 4-րդ թաղամասի շենքերից մեկում գտնվող իր բնակարանի դռան առջեւ տեսել է տեղադրված թուղթ՝ որի վրա եղել է 5.000.000 ՀՀ դրամի պահանջ, ինչպես նաեւ այն չվճարելու դեպքում՝ բռնություն գործադրելու, կյանքից զրկելու սպառնալիքներ պարունակող ձեռագիր գրառում: Հաջորդ օրը՝ ժամը 15.00-ից 15.30-ն ընկած ժամանակահատվածում, նույն բնակարանի շքամուտքին նմանատիպ գրառումներով թուղթ է նկատել նաեւ հիշյալ քաղաքացու կինը:

Նախաքննության ընթացքում իրականացվել են քննչական եւ վարութային պլանավորված գործողություններ. առգրավվել են դեպքի վայրի մոտակա տարածքում տեղադրված տեսախցիկների տեսագրությունները, նշանակվել է դատաձեռագրաբանական փորձաքննություն, հարցաքննվել են մի շարք անձինք:

Արդյունքում պարզվել է ենթադրյալ հանցագործությունը կատարած անձի ինքնությունը, որը նույն շենքի բնակիչ է՝ ծնված 2003 թվականին:

Ձեռք ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա միջնորդություն է ներկայացվել հսկող դատախազին՝ 20-ամյա երիտասարդի նկատմամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, որը բավարարվել է: Վերջինիս մեղադրանք է ներկայացվել, եւ որպես խափանման միջոց է կիրառվել բացակայելու արգելքը:

Նախաքննությունն ավարտվել է: Քրեական վարույթի նյութերն ուղարկվել են հսկող դատախազին՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու եւ գործը դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ԼՈՒՐԵՐ

ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 3-ին հիվանդանոցից ոստիկանության Մասիսի բաժին հաղորդում էր ստացվել, որ «ձախ հարականջային շրջանի կտրած արնահոսող վերք, քթի, ձախ թեւի կտրած արնահոսող վերք, միջհոնքային շրջանի քերծված վերքեր» ախտորոշմամբ բուժօգնության է տեղափոխվել սուրենավանցի 62-ամյա մի տղամարդ:

Ոստիկանության Մասիսի բաժնի ծառայողները պարզել են, որ ժամը 16:30-ի սահմաններում Մասիս քաղաքի 3-րդ թաղամասի շենքերից մեկի մոտ ճանապարհը չզիջելու հարցի շուրջ վիճաբանության ընթացքում անհայտ անձը դանակով հարվածներ էր հասցրել հիվանդանոց տեղափոխվածին: Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ 62-ամյա տղամարդուն մարմնական վնասվածքները պատճառել է «Տոյոտա Ալփարդ» մակնիշի մեքենայի վարորդը: Մասիս քաղաքի 68-ամյա բնակիչը հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել է ոստիկանության Մասիսի բաժին: Մեքենան տեղափոխվել է բաժնի հատուկ պահպանվող տարածք:

Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Մասիսի քննչական բաժին:

ՍՊԱՆԵԼ Է ՍԿԵՍՈՒՐԻՆ

Ապրիլի 2-ին ՆԳՆ ոստիկանության Տավուշի մարզի օպերատիվ կառավարման կենտրոն «Դիլիջան» բժշկական կենտրոնից հաղորդում էր ստացվել, որ շտապօգնության խումբը կանչով մեկնել է Դիլիջան քաղաքի Շամախյան փողոցի շենքերից մեկի մի բնակարան, սակայն մինչ շտապօգնության ժամանումը 62-ամյա Վարսենիկ Մ.-ն հանկարծամահ էր եղել: Նշված հասցե մեկնած Դիլիջանի բաժնի օպերատիվ-քննչական խմբին մահացածի որդին հայտնել էր, որ ժամը 15.30-ի սահմաններում մայրը իր ներկայությամբ հանկարծամահ է եղել: Այս մասին հայտնում են ոստիկանությունից: Արտաքին զննությամբ 62-ամյա կնոջ դեմքին եղել են կապտուկներ, որոնց վերաբերյալ որդին հայտնել է, որ մայրը մարտի 31-ին տանն ընկել է: ՆԳՆ ոստիկանության Տավուշի մարզային վարչության եւ Դիլիջանի բաժնի քրեական հետախույզների համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ մահացածի որդու 40-ամյա կինը մետաղյա շերեփով պարբերաբար խփել է սկեսրոջ գլխին, դեմքին: Ստացված մարմնական վնասվածքների հետեւանքով 62-ամյա կինը մահացել է:

40-ամյա կինը ձերբակալվել եւ ներկայացվել է Դիլիջանի քննչական բաժին:

ԱԿԱՆԻ ՊԱՅԹՅՈՒՆ

Ապրիլի 2-ին՝ ժամը 15:35-ին, ոստիկանության Մարտունու շրջբաժնի Կարմիր շուկա բաժանմունքում հաղորդում է ստացվել, որ Կարմիր շուկա վարչական տարածքի անտառային գոտում ական է պայթել՝ վիրավորելով քաղաքացիական անձի: Դեպքի վայր մեկնած ոստիկանության ծառայողները պարզել են, որ նույն օրը՝ ժամը 15:10-ի սահմաններում, Կարմիր շուկայի երեք բնակիչներ շփման գծին մոտ գտնվող նշված տեղամասում ծնեբեկ էին հավաքում, երբ Գ.Բ.-ն (ծնված 1997 թվականին) պայթել է ականի վրա: Վերջինս տեղափոխվել է Հանրապետական բժշկական կենտրոն, որտեղ ախտորոշվել է ձախ ոտնաթաթի տրավմատիկ ամպուտացիա: Ստուգմամբ զբաղվում է ոստիկանության Մարտունու շրջանային բաժինը:Այս մասին հայտնում են ԱՀ ներքին գործերի նախարարությունից:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 3-ից 4-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 67 դեպք, որոնցից 8-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾԵԾԻ ԳՈՐԾ

Ապրիլի 5-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Իջեւան քաղաքի նստավայրում, դատավոր Սամվել Մարդանյանի նախագահությամբ, նշանակված է Իջեւան համայնքի Խաշթառակ գյուղի բնակիչներ՝ հայր եւ աղջիկ Սամվել եւ Մարիաննա Հակոբջանյանների դատավարության առաջին նիստը: Ըստ մեղադրական եզրակացության՝ Սամվել Հակոբջանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2020 թվականի օգոստոսի 16-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, Տավուշի մարզի Խաշթառակ համայնքում իրեն պատկանող առանձնատանը իր հանգիստը խանգարելու պատճառով մարմնական վնասվածքներ պատճառելու դիտավորությամբ ձեռքով հարվածել է իր անչափահաս թոռանը՝ 2014թ. հունվարի 13-ին ծնված Սերգեյ Անուշավանի Հակոբջանյանի դեմքին, ինչի հետեւանքով վերջինս վայր է ընկել ննջասենյակի հատակին, գլխով հարվածելով բազմոցի ոտնակին՝ ստացել է առողջության ծանր վնաս, կյանքին վտանգ սպառնացող մարմնական վնասվածքներ, որն էլ անզգուշությամբ առաջացրել է Սերգեյ Հակոբջանյանի մահը. վերջինս ստացած մարմնական վնասվածքներից 2020 թվականի օգոստոսի 25-ին Երեւան քաղաքի «Սուրբ Աստվածամայր» ԲԿ-ում մահացել է: Բացի այդ, Սամվել Հակոբջանյանը 2020թ. օգոստոսի 16-ի երեկոյան Խաշթառակ համայնքում գտնվող, իրեն պատկանող առանձնատան բակում իր վրա անվադող նետելու համար մարմնական վնասվածքներ պատճառելու դիտավորությամբ փայտով մի քանի անգամ հարվածել է անչափահաս թոռանը՝ 2016թ. սեպտեմբերի 19-ին ծնված Նաիրի Ղալումյանի մարմնի տարբեր մասերին, ապա վեր բարձրացրել նրան եւ գցել հատակին՝վերջինիս առողջությանը պատճառելով միջին ծանրության վնաս: Մարիաննա Հակոբջանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա մինչեւ 2020թ. օգոստոսի 16-ն ընկած ժամանակահատվածում պարբերաբար տարբեր կենցաղային առիթներով դիտավորությամբ ձեռքերով, ոտքերով, փայտով բազմաթիվ հարվածներ է հասցրել իր անչափահաս երեխաների՝ 016թ. սեպտեմբերի 19-ին ծնված Նաիրի Դավթի Ղալումյանի, 2014թ. ապրիլի 4-ին ծնված Նարե Դավթի Ղալումյանի, 2011թ. հունիսի 29-ին ծնված Նարեկ Դավթի Ղալումյանի, 2018թ. ապրիլի 13-ին ծնված Նիկ Էդգարի Անտոնյանի եւ եղբոր անչափահաս որդիների՝ 2014թ. հունվարի 13-ին ծնված Սերգեյ Անուշավանի Հակոբջանյանի,2016թ. հունիսի 30-ին ծնված Արտյոմ Անուշավանի Հակոբջանյանի մարմնի տարբեր մասերին: Սամվել Հակոբջանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 166 հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 7-րդ, 15-րդ կետերով,167 հոդվածի 2-րդ մասի 4-րդ եւ 9-րդ կետերով եւ 196 հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 5-րդ եւ 6-րդ կետերով: Մարիաննա Հակոբջանյանին մեղադրանք է առաջադրվել 196 հոդվածի 2-րդ մասով: Սամվել Հակոբջանյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չբացակայելու արգելքը, Մարիաննա Հակոբջանյանի նկատմամբ՝չհեռանալու մասին ստորագրությունը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՍՈՒԼԻՍ

ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՈՒՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը սկսել է նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման նպատակով փաստաթղթերի հավաքագրման գործընթաց: Նախադպրոցական հաստատությունների մանկավարժների համար այս գործընթացը ենթադրում է հավելավճար ստանալու հնարավորություն: «Արմենպրես»-ի մամուլի սրահում հրավիրված ասուլիսում ՀՀ ԿԳՄՍ նախարարության հանրակրթության վարչության գլխավոր մասնագետ Թեհմինե Կարախանյանը նշեց, որ աշխատանքները տարբեր փուլեր են անցնում: Նախ՝ նախակրթական հաստատությունների մանկավարժները պարտադիր պետք է վերապատրաստվեն, այնուհետեւ արդեն կամավորության սկզբունքով մանկավարժը կարող է դիմել տարակարգի՝ հավելավճար ստանալու համար:

«Վերապատրաստումն իրականացվում է բացառապես պետական բյուջեի հաշվին: Մանկավարժը պարտադիր վերապատրաստվելուց, սահմանված բնութագրիչներին համապատասխանելուց հետո կարող է ներկայացնել փաստաթղթերը հավելավճար ստանալու համար: Հավելավճարի չափը կախված է, թե մանկավարժը քանի բնութագրիչի է համապատասխանում»,- ասաց Թեհմինե Կարախանյանը:

Ստուգվում է նախ մանկավարժի գործնական աշխատանքը՝ ինչ տիպի աշխատանքով է տարբերվում իր կոլեգաներից, ինչպես է կազմակերպում երեխաների ընտանիքների հետ համագործակցությունը, ինչպես է պլանավորում իր պարապմունքները եւ այլն: Ընդհանուր սահմանված է 9 բնութագրիչ: Առաջին աստիճանի դեպքում մանկավարժը պետք է համապատասխանի 3-ից ոչ պակաս բնութագրիչի, երկրորդ աստիճանի դեպքում՝ 5 բնութագրիչի, 3-րդ աստիճանի դեպքում՝ 7 եւ ավելի բնութագրիչի:

Այսօր մանկավարժների աշխատավարձը տատանվում է 70 000-100 000 դրամի սահմաններում: Առաջին աստիճանի տարակարգի դեպքում հավելավճարը կազմում է նվազագույն աշխատավարձի 30 տոկոսը, երկրորդ աստիճանի դեպքում՝40 տոկոսը, երրորդ աստիճանի դեպքում՝ 50 տոկոս:

Հայկական պետական մանկավարժական համալսարանի նախադպրոցական մանկավարժության եւ մեթոդիկաների ամբիոնի դասախոս, Երեւանի թիվ 6 մսուր-մանկապարտեզի մեթոդիստ Իրինա Պոնոմարենկոն նշեց, որ հավելավճար ստանալու հնարավորությունը բավական մոտիվացնող է:

«Շատ սպասված փոփոխություն է, վերջապես մանկավարժները կարող են ցույց տալ իրենց կատարած աշխատանքը, գնահատվեն: Այսօր նախատեսվում է նաեւ վերապատրաստման ծրագիր ֆիզկուլտհրահանգիչների, երաժշտության դաստիարակների, մեթոդիստների համար»,-ասաց Իրինա Պոնոմարենկոն:

Արեւիկ Նիկողոսյանը գործող մանկավարժ է, աշխատում է Չարենցավանի «Հրաշք» մսուր-մանկապարտեզում: Կարեւորելով նման նախաձեռնությունը՝ նշեց, որ ինքը պատրաստվում է դիմել հավելավճար ստանալու համար:

«Շատ ողջունելի է, որ այսքան տարի անց նման հնարավորություն կա: Ես շահագրգիռ եմ այս հարցում ու պատրաստվում եմ մասնակցել: Չորս բնութագրիչի համապատասխանում եմ: Ասեմ, որ դաստիարակների շրջանում ոգեւորություն կա, բոլորն էլ դրական են գնահատում: Լավ հնարավորություն է կրթվելու, վերապատրաստվելու եւ հավելավճար ստանալու համար»,-ասաց Արեւիկ Նիկողոսյանը:

Մանկավարժներն ազատ են հավելավճարի համար դիմումներ ներկայացնելու հարցում: Որեւէ վերջնաժամկետ այդ առումով նախատեսված չէ:

Վերը նշված հնարավորությունը միակը չէ, այն բարեփոխումների ընդհանուր գործընթացի մի բաղադրիչն է: Նախակրթական համակարգում բարեփոխումները նախանշված են մի քանի ուղղություններով՝ մանկապարտեզաշինություն, մասնագիտական որակի բարձրացման վարձատրության ներդրում, նախադպրոցական կրթության բովանդակության վերանայում:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ԲՈԼՈՐ ԿԵՏԵՐԸ ՎԵՐԱԾԵԼ Է ՔՐԵԱԿԱՆԻ

Մանհեթենի օկրուգային դատախազ Էլվին Բրեգի գրասենյակը ԱՄՆ նախկին նախագահ Դոնալդ Թրամփի դեմ մեղադրանքի բոլոր 34 կետերը վերադրակավորել է քրեական. տեղեկացրել է Yahoo News պորտալը՝ հղում կատարելով քննության մանրամասներին ծանոթ աղբյուրին:

«Գործնական փաստաթղթերի կեղծման մեղադրանքը կարող է Նյու Յորքի նահանգում հետապնդվել որպես զանցանք: Բրեգի գրասենյակը բոլոր մեղադրանքները հասցրել է Է դասի հանցագործությունների մակարդակի, որոնք Նյու Յորքի նահանգի քրեական օրենսգրքում համարվում են հանցագործությունների ցածր մակարդակ:

Այս միջոցն ընդունվել է այն պատճառով, որ նախկին նախագահի գործողությունները, իբր, ուղղված են եղել մեկ այլ հանցագործությունը թաքցնելուն:

Ինչպես նշվել է հոդվածում, նահանգի քրեական օրենսգրքի համապատասխան՝ Է դասի հանցագործությունը՝ կապված գործնական փաստաթղթերի կեղծման հետ, կարող է պատժվել չորս տարի ազատազրկմամբ: Ինչպես ընդգծել է պորտալի զրուցակիցը, գործնական տեսակետից իրադարձությունների զարգացման այդ տարբերակն այնքան էլ հավանական չէ:

«Ոչ ոք բանտում չի հայտնվում՝ խախտելով օրենքն առաջին անգամ»,- բացատրել է աղբյուրը:

Թրամփը մեկ ժամ առաջ հայտարարել էր, որ երեքշաբթի իրեն Նյու Յորքի դատարանում ներկայացնելու են մեղադրանքներ 33 կետերով, ընդ որում՝ դրանցից ոչ մեկն իր համար անակնկալ չէր: Նախկին նախագահի իրավաբան Ջո Տակոպինան «ՌԻԱ Նովոստի»-ի հետ զրույցում ասել է, որ բոլոր մեղադրանքները հենվում են նույն գործի վրա:

Ավելի վաղ ԶԼՄ-ները տեղեկացրել էին, որ երեքշաբթի Նյու Յորքի դատարանում պատրաստվում են Թրամփին ներկայացնել առնվազն մեկ քրեական մեղադրանք: Ենթադրվում է, որ խոսքը պոռնոդերաստանուհի Սթորմի Դենիելսի մասին է, որին, իբր, խոշոր գումար են վճարել, որպեսզի լռի Թրամփի հետ իրեն վերագրվող սիրավեպի մասին:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 13 ճՏՊ. 23 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀԱՇՄԱՆԴԱՄ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳԻՐ

Հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակի բարելավման, հաշմանդամության հիմքով խտրականության բացառման, բոլոր ոլորտներում նրանց լիարժեք եւ արդյունավետ մասնակցության ապահովման նպատակով՝ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակվել եւ e-draft իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հանրային քննարկման է ներկայացվել Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027 թթ. համալիր ծրագիրը:

Համալիր ծրագրում ամրագրված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ու հնարավորությունների ընձեռնմանն ուղղված առաջիկա տարիների պետական քաղաքականությունը, ՀՀ պետական ու համայնքային բյուջեների շրջանակում իրականացվող միջոցառումները, սահմանված են դրանց կատարման պատասխանատուները եւ թիրախները:

Հիմնվելով Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թթ. համալիր ծրագրի հիմնական ուղղությունների վրա եւ հաշվի առնելով ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակները՝ սահմանվել է 7 առաջնահերթություն.

- հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանություն, հավասար հնարավորությունների եւ մատչելի պայմանների ապահովում, ինչպես նաեւ խտրականության բացառում,
- հաշմանդամություն ունեցող անձանց որակյալ ներառական կրթության իրավունքի ապահովում կրթության բոլոր մակարդակներում,
- հաշմանդամություն ունեցող անձանց արդյունավետ զբաղվածության եւ արժանապատիվ աշխատանքի ապահովում,
- ֆիզիկական եւ հոգեկան առողջության իրավունքի հնարավոր առավելագույն մակարդակով ապահովում,
- մշակութային իրավունքների խթանում եւ ապահովում, մասնակցություն սպորտին եւ ժամանցին,
- հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների բարելավում, խնամքի ծառայությունների փոխակերպում եւ անկախ կյանքի ապահովում,
- արտակարգ իրավիճակում կամ ռազմական դրության ժամանակ հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանության եւ անվտանգության ապահովում:

Նախագիծը մշակվել է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից շահագրգիռ գերատեսչությունների եւ հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ: Համալիր ծրագրի նախագծի մշակմանը փորձագիտական աջակցություն է ցուցաբերել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» հասարակական կազմակերպությունը, այդ թվում՝ աջակցելով մշակման եւ հանրային քննարկման փուլում հաշմանդամություն ունեցող անձանց հետ խորհրդակցությունների անցկացման հարցում: Համալիր ծրագրի նախագծի մշակման փուլում մասնակցություն է ունեցել ոլորտային յոթ հասարակական կազմակերպություն եւ հաշմանդամություն ունեցող ավելի քան 70 անձ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՏՆՕՐԵՆՆԵՐԸ ԿԻՄԵԼ ԵՆ ԻՐԵՆՑ ՓՈՐՁԸ

Հանրակրթության նոր չափորոշչի ներդրմամբ պայմանավորված՝ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում տեղի է ունեցել հանդիպում, որին մասնակցել են Տավուշի, Արագածոտնի, Կոտայքի, Արարատի, Լոռու, Գեղարքունիքի մարզերի եւ Երեւանի ուսումնական հաստատությունների վերապատրաստված տնօրեններ:

Հանդիպմանը ներկա են եղել ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսյա Սվաջյանը, ԿՁՆԱԿ հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արտաշես Թորոսյանը, տնօրենի տեղակալ Ինգա Վարդանյանը, ինչպես նաեւ Տավուշի մարզպետարանի կրթության վարչության պետ Մերուժան Հարությունյանը:

Նախարարի տեղակալ Արաքսյա Սվաջյանը ողջունել է ներկաներին՝ կարեւորելով Հանրակրթության նոր չափորոշչի ներդրման հարցը: Արաքսյա Սվաջյանը փաստել է Տավուշի մարզի ավելի քան 80 դպրոցում նոր չափորոշչի ներդրման գործընթացի աշխատատարությունն ու վերահսկելիությունը: Նա շեշտել է, որ ՀՀ մյուս մարզերի դպրոցներում չափորոշչի ներդրման գործընթացը կարող է ուղեկցվել որոշակի այլ դժվարություններով, հետեւաբար ապավինում է վերապատրաստված մասնագետների ջանքերին:

ԿՁՆԱԿ հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արտաշես Թորոսյանի խոսքով՝ այսօրինակ հանդիպումները հնարավորություն են ընձեռում քննարկելու իրականացված վերապատրաստումների արդյունքները եւ չափորոշիչը փորձարկած ուսումնական հաստատությունների տնօրենների հետ կատարելու փորձի եւ մտքերի փոխանակում:

ԿՁՆԱԿ հիմնադրամի տնօրենի տեղակալ Ինգա Վարդանյանը խոսել է չափորոշչի ներդրման մեխանիզմների մասին, ներկայացրել սպասվելիք փոփոխությունները եւ Տավուշի փորձի որոշ մանրամասներ:

Թեղուտի միջնակարգ դպրոցից Ա. Թամրազյանը ներկայացրել է դպրոցի 2022-2023 ուստարվա ուսումնական պլանը՝ հատկապես անդրադառնալով ընտրովի բաղադրիչին: Հնչել են մի շարք հարցեր, որոնք հիմնականում վերաբերել են նախագծային աշխատանքների եւ երկարօրյա դասընթացների կազմակերպմանը:

Դիլիջանի թիվ 4 հիմնական դպրոցի տնօրեն Է. Սահակյանը ներկայացրել է նախագծային ուսուցման վերաբերյալ դպրոցի փորձը, մասնակիցներին ուղեկցել քիմիայի, ֆիզիկայի լաբորատորիաներ՝ ներկա գտնվելու աշակերտների իրականացրած հետազոտություններին:

Ներքին Ծաղկավանի միջնակարգ դպրոցի տնօրեն Դավիթ Յոլչյանն էլ խոսել է ներդպրոցական վերահսկողության մասին՝ մանրամասն անդրադառնալով մնացորդային գիտելիքների ստուգմանը եւ առաջին աստիճանի բարդության հարցերին:

Խեւքարի միջնակարգ դպրոցի տնօրեն Ն. Անանյանը ներդպրոցական վերահսկողության շրջանակում անդրադարձել է «Ընթերցանությունը տարրական դպրոցում» ծրագրին եւ երկարօրյա պարապմունքներին:

Լճկաձորի հիմնական դպրոցի տնօրեն Մ. Առաքելյանն էլ խոսել է գնահատման նոր մեթոդաբանության, ծնողական համայնքում դրական արձագանքների մասին:

Հանդիպման ընթացքում հնչել են քննարկվող թեմաների վերաբերյալ մի շարք հարցեր, որոնց պատասխանել են Տավուշի մարզի տնօրենները եւ ԿՁՆԱԿ-ի տնօրենի տեղակալը՝ եւս մեկ անգամ կարեւորելով կրթության բարեփոխումների այս գործընթացի առաջնահերթությունները:

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐ

ԱՇԽԱՐՀՈՒՄ ԶԵՆՔԻ ԱՄԵՆԱԽՈՇՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՂԸ

2022թ. տվյալներով՝ Հնդկաստանն աշխարհում հիմնական զինատեսակների ամենախոշոր ներմուծող երկիրն էր. նրա գլխավոր մատակարարը նախկինի պես Ռուսաստանն է: Այսպիսի եզրակացություն է արվել Ստոկհոլմի խաղաղության խնդիրների հետազոտության միջազգային ինստիտուտի (SIPRI)՝ երկուշաբթի հրապարակած հաշվետվությունում:

Ինչպես նշել են ինստիտուտի փորձագետները, Հնդկաստանը պահպանել է առաջատար դիրքերը՝ անգամ չնայած այն բանին, որ նրա ներմուծումը 2013-2017թթ. եւ 2018-2022թթ. կրճատվել է 11 տոկոսով: Նրանց կարծիքով՝ այս նվազումը բացատրվում է հնդկական կողմի գնումների բարդ գործընթացով, ինչպես նաեւ մատակարարների դիվերսիֆիկացման պետական քաղաքականության առանձնահատկություններով: Բացի այդ, իրավիճակի վրա ազդում են նաեւ երկրի ներսում զենքի արտադրություն կազմակերպելու պետության ջանքերը՝ պայմանավորված ներմուծումից կախումը նվազեցնելու ցանկությամբ:

«Հնդկաստանն աշխարհում սպառազինությունների հիմնական տեսակների ամենախոշոր ներմուծողն էր 2018-2022թթ. (սպառազինությունների համաշխարհային ներմուծման ընդհանուր ծավալի 11 տոկոսը): Երկիրը պահպանում էր այդ դիրքը նաեւ 1993-2022թթ.»,- նշվել է հաշվետվությունում:

SIPRI-ի փորձագետները փաստել են, որ սպառազինությունների ամենախոշոր արտահանողը Հնդկաստան նախկինի պես մնում է Ռուսաստանը՝ չնայած այն բանին, որ ՌԴ-ի բաժինը 2018-2022թթ. կրճատվել է: «Ռուսաստանը զենքի ամենախոշոր մատակարարն էր Հնդկաստան 2013-2017թթ., ինչպես նաեւ 2018-2022թթ., սակայն նրա բաժինը սպառազինությունների հնդկական ներմուծման ընդհանուր ծավալում կրճատվել է՝ 64-ից հասնելով 45 տոկոսի»,- նշվել է փաստաթղթում:

Վերլուծաբանների խոսքով՝ ՌԴ-ից սպառազինությունների ներուծման կրճատման վրա ազդում են մի քանի գործոններ: Մասնավորապես, դրանցից են այլ մատակարար երկրների բարձր մրցակցությունը, Հնդկաստանում զենքի արտադրության ավելացումը, ինչպես նաեւ «2022-ից սկսած՝ Ռուսաստանի կողմից զենքի արտահանման սահմանափակումը»:

Հաշվետվությունում նաեւ նշվել է, որ սպառազինությունների հնդկական ներմուծումը Ֆրանսիայից, որը նախկինում կազմում էր 62 մարտական ինքնաթիռ եւ 4 սուզանավ, 2022թ. վերջի դրությամբ ավելացել է 489 տոկոսով:

«Այսպիսով, Ֆրանսիան սպառազինությունների մատակարարման ծավալով առաջ է անցել ԱՄՆ-ից եւ երկրորդն է Հնդկաստան 2018-2022թթ. զենքի արտահանման գործում»,- նշվել է հաշվետվությունում:

Ստոկհոլմի խաղաղության խնդիրների հետազոտության միջազգային ինստիտուտի (SIPRI) հաշվետվությունը կոչվում է «Սպառազինությունների միջազգային մատակարարումների միտումները-2022»: Փաստաթղթում համեմատվում են հնգամյա երկու շրջաններ՝ 2013-2017 եւ 2018-2022թթ.:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

Ո՞Ր ՏԻԵԶԵՐԱԳՆԱՑՆԵՐԸ ԿՊՏՏՎԵՆ ԼՈՒՍՆԻ ՇՈՒՐՋԸ

2024 թ Artemis II առաքելության շրջանակում տիեզերագնացների անձնակազմը կոչտվի Լուսնի շուրջը՝ առանց դրա վրա վայրէջք կատարելու: ԱՄՆ-ի Օդագնացության եւ տիեզերական հետազոտությունների ազգային վարչությունը (NASA) արդեն հայտնել է անձնակազմի կազմը: Այն ներառում է չորս տիեզերագնաց՝ հրամանատար Ռիդ Ուայզմեն (Reid Wiseman), օդաչու Վիկտոր Գլովեր (Victor Glover), առաքելության առաջին մասնագետ Քրիստինա Համոկ Կուկ (Christin Hammock Koch), առաքելության երկրորդ մասնագետ Ջերեմի Հանսեն (Jeremy Hansen): Ի՞նչ է հայտնի այս տիեզերագնացների մասին: Անձնակազմի հրամանատար Գրեգորի Ռիդ Ուայզմանի համար սա կլինի երկրորդ թռիչքը դեպի տիեզերք: Առաջինը եղել է 2014 թ., երբ նա ավելի քան 165 օր անցկացրեց տիեզերքում՝ 41-րդ արշավախմբի ժամանակ Միջազգային տիեզերակայանում (ՄՏԿ) որպես թռիչքային ինժեներ աշխատելով:

2020 թ. դեկտեմբերից մինչեւ 2022 թ. նոյեմբերը նա աշխատել է որպես Տիեզերագնացության գրասենյակի ղեկավար, ինչը NASA-ի գործող տիեզերագնացների համար բարձրագույն ղեկավար պաշտոնն է: Վիկտոր Գլովերի համար սա եւս կլինի երկրորդ թռիչքը դեպի տիեզերք: Նախկինում նա եղել է NASA SpaceX Crew-1 տիեզերանավի օդաչուն, որը տիեզերագնացներին տեղափոխում էր ՄՏԿ: Այնտեղ նրանք մնացել են 168 օր: ՄՏԿ-ում 64-րդ արշավախմբի շրջանակում Գլովերը որպես թռիչքային ինժեներ մասնակցել է գիտական հետազոտությունների: Նա նաեւ չորս անգամ դուրս է եկել բաց տիեզերք: Քրիստինա Համոկ Կուկը նույնպես կիրականացնի իր երկրորդ տիեզերական թռիչքը Artemis II առաքելության շրջանակում: Նա աշխատել է որպես ինժեներ ՄՏԿ-ում 59, 60 եւ 61 արշավների ժամանակ: Նա նաեւ հայտնի է նրանով, որ տիեզերքում կնոջ անցկացրած ամենաերկար ժամանակահատվածի ռեկորդ է սահմանել՝ 328 օր, վեց անգամ դուրս է եկել բաց տիեզերք, դրանցից երեքի դեպքում բաց տիեզերք է դուրս եկել միայն կանցից բաղկացած թիմը՝ 42 ժամ 15 րոպե ընդհանուր տեւողությամբ: Կանադացի տիեզերագնաց Ջերեմի Հանսենի համար սա առաջին թռիչքն է դեպի տիեզերք: Նա կանադական զինված ուժերի գնդապետ է, կործանիչի նախկին օդաչու, որը տիեզերական գիտությունների ոլորտում բակալավրի աստիճան է ստացել Քինգստոնում (Օնտարիո) գտնվող Կանադայի թագավորական ռազմական քոլեջից, իսկ 2000 թ. նույն հաստատությունից ստացել է ֆիզիկայի մագիստրոսի կոչում՝ լայն տեսադաշտով արբանյակային հետագծման ոլորտում հետազոտությունների մասնագիտացումով (Wide Field of View Satellite Tracking): Հիշեցնենք, որ 2022թ. դեկտեմբերին NASA-ի Artemis I առաքելությունը հաջողությամբ ավարտվեց, եւ Orion տիեզերանավը վայրէջք կատարեց Խաղաղ օվկիանոսում: Ծրագրի երկրորդ փուլի շրջանակում վերոնշյալ տիեզերագնացները կպտտվեն Լուսնի շուրջը եւ կվերադառնան Երկիր: Artemis II-ը կլինի Երկրի ուղեծրից այն կողմ առաջին օդաչուավոր առաքելությունը Apollo 17-ից հետո. այն վերջին առաքելությունն էր, որի շրջանակում 1972 թ. դեկտեմբերին վայրէջք է կատարվել Լուսնի վրա: Երրորդ փուլի՝ Artemis III առաքելության շրջանակում տիեզերագնացները վայրէջք կկատարեն Լուսնի մակերեսին: Ակնկալվում է, որ դա տեղի կունենա 2025 թ. դեկտեմբերից ոչ շուտ: Մինչ այդ պետք է փորձարկվեն SpaceX-ի՝ Լուսնի վրա վայրէջք կատարելու համար նախատեսված մոդուլը (Starship Human Landing System) եւ Axiom Space-ի տիեզերական նոր կոստյումները:

ՍԵՐ ԵՎ ԾԻԾԱՂ

ԼՈՒՍԻՆԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՇՏԸ

Ապրիլի 3-ին հիվանդանոցում մահացել է ՀՀ վաստակավոր դերասանուհի Լուսինե Կիրակոսյանը:

Դերասանուհուն նրա երկրպագուները վերջին հրաժեշտը տվեցին ապրիլի 4-ին Երեւանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում, իսկ հուղարկավորությունը տեղի կունենա այսօր՝ ապրիլի 5-ին, Գյումրիում: Մարտի 18-ին Լուսինե Կիրակոսյանը շտապօգնության մեքենայով տեղափոխվել էր «Էրեբունի» ԲԿ, համապատասխան հետազոտություններ անցնելուց հետո նրա մոտ ախտորոշվել էր երկկողմանի թոքաբորբ: Տեւական ժամանակ նրա առողջական վիճակը ծանր էր՝ առանց դրական տեղաշարժի: Լուսինե Կիրակոսյանը ծնվել է 1946 թ-ի դեկտեմբերի 4-ին Գյումրիում: Դպրոցում սովորելուն զուգահեռ աշխատել է Գյումրու դրամատիկական թատրոնում: 1969 թվականին Լուսինե Կիրակոսյանն ավարտել է Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտը՝ Վարդան Աճեմյանի արվեստանոցը: Նույն թվականից Հրաչյա Ղափլանյանի հրավերով աշխատել է Երեւանի դրամատիկական թատրոնում՝ որպես դերասանուհի: Խաղացած ներկայացումներից են՝ Երվանդ Օտյանի «Սեր եւ ծիծաղ» (Նվարդ), Ս. Ստրատիեւի «Ավտոբուս» (Կին), Ժորա Հարությունյանի «Քո վերջին հանգրվանը» (Սիրարփի), Բ. Շոուի «Շոկոլադ ուտող զինվորը» (Լուկա), Գ. Արշակյանի «Այս աշխարհի փոքրերը» (Անահիտ), Մ. Մնացականյանի «Թաղի զավակը» (Սաթիկ), Պերճ Ջեյթունցյանի «Կանգ առ երկրագունդ» (Սիրուշ), Ա. Մակայոնոկի «Հալածված առաքյալը» (Մայր), Խ. Միլիանի «Ցիանակալիում... կաթով կամ առանց կաթի» (Վեներանդա) եւ այլն: Նկարահանվել է «Հեծյալը, որին սպասում էին» (1984), «Ավտոբուս» (1988), «Լաբիրինթ» (1994), «Մեր բակը 1» (1996) ֆիլմերում: Հեռուստադիտողի հիշողության մեջ միշտ մնացել եւ մնում է Լուսինե Կիրակոսյանի մարմնավորած Ռոզի կերպարը «Վերվարածները ընտանիքում» առաջին հայկական հեռուստասերիալից:

2007 թվականին արժանացել է Հայաստանի վաստակավոր արտիստի կոչման, 2010 թվականին՝ ՀԹԳՄ «Արտավազդ» մրցանակի՝ կնոջ երկրորդ պլանի լավագույն դերակատարման համար (Ցիանակալիում... կաթով կամ առանց կաթի):

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Մեկնարկում են 2023թ. պետական բյուջեով նախատեսված՝ պատմության եւ մշակույթի հուշարձանների վերականգնման աշխատանքները:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության վարչության աշխատակիցները մարտի 30-ին այցելել են Տավուշի եւ Լոռու մարզերի՝ 2023 թ. պետական միջոցների հաշվին վերականգնվող հուշարձանների տարածք աշխատանքների մեկնարկից առաջ ի հայտ եկած խնդիրները տեղում քննարկելու, ինչպես նաեւ շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման եւ անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանման համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Այցին ներկա էին նաեւ վերականգնման աշխատանքներ եւ հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչները:

Շարունակվում են 2022 թ. մեկնարկած ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստի թանգարանի վերականգնման աշխատանքները: Այցի ընթացքում քննարկվել են 2023թ. նախատեսված աշխատանքները, քանդման աշխատանքների արդյունքում ի հայտ եկած՝նախկինում (ԽՍՀՄ տարիներին) իրականացված վերակառուցման բացթողումների հետեւանքով առաջացած խնդիրները եւ հնարավոր լրացուցիչ ծավալների ավելացումը:

Աշխատանքային խումբն այցելել է նաեւ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահին վանական համալիր: Չնայած այն հանգամանքին, որ Սբ Ամենափրկիչ եկեղեցու տանիքաածկերի նորոգման աշխատանքները նույնպես նախատեսվում է իրականացնել տարվա ընթացքում, դրանք դեռեւս շինարարական հրապարակի նախապատրաստական փուլում էին: Կապալառու կազմակերպության ներկայացուցիչների հետ տեղում քննարկվել են ջրահեռացման, ծածկասալերի եւ ներքին առագաստների քարերի փոխարինման խնդիրները:

ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐՎՈՂ ԲՈՆՈՒՍ

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի 24-ամյա հարձակվող Կիլիան Մբապեն ամեն մրցաշրջանում ստանում է 60 միլիոն եվրո լրացուցիչ բոնուս ակումբից չհեռանալ համար:

Մբապեի պայմանագիրը փարիզյան ակումբի հետ նախատեսված է մինչեւ 2024թ. հունիս, եթե այս տարվա ամռանը նա չակտիվացնի մեկ տարով (մինչեւ 2025թ. հունիս) երկարաձգման կետը:

Մբապեն ՊՍԺ-ի ղեկավարությանն արդեն հայտնել է, որ չի երկարաձգի պայմանագիրը եւ հաջորդ տարի կստանա ազատ գործակալի կարգավիճակ:

Transfermarkt-ը Մբապեի տրանսֆերային արժեքը գնահատում է 180 միլիոն եվրո:

● *Ապրիլի 6-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Բրեմենյան երաժիշտները» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 14:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈՁԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ որ դեպքում կարող է անձը ստանալ անժամկետ հաշմանդամություն:

Կարեն Պետրոսյան (54 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կ. Պետրոսյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ հաշմանդամության խումբը սահմանվում է անժամկետ՝

ա) օրենքով տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձանց,

բ) վերականգնողական միջոցառումների հեռանկարի բացակայության, հաշմանդամի սոցիալական անբավարարության վերացման կամ նվազեցման անհնարինության դեպքերում, որոնք հետեւանք են անատոմիական արատով կամ անդառնալի կառուցվածքային փոփոխություններով կամ օրգանիզմի օրգանների կամ օրգան-համակարգերի ֆունկցիաների խանգարումով առողջության խաթարմամբ պայմանավորված կենսագործունեության կայուն սահմանափակման,

գ) իրականացված վերականգնողական միջոցառումների անարդյունավետության դեպքում, որը բերում է հաշմանդամի մշտական սոցիալական պաշտպանության անհրաժեշտության (առնվազն 7 տարվա ընթացքում բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների դիտման պայմաններում, իսկ 2 եւ 4 տարի դիտման պայմաններում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 780-Ն որոշման NN 2 եւ 3 հավելվածների),

դ) մեկ ակնագնդի կամ մեկ աչքի տեսողության անվերադարձ բացակայության դեպքում:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնենք, որ 1-ին խմբի հաշմանդամությունը սահմանվում է երկու տարի ժամկետով, 2-րդ եւ 3-րդ խմբերի հաշմանդամությունը՝ մեկ տարի ժամկետով, իսկ «Հաշմանդամ երեխա» կարգավիճակը՝ երկու տարի ժամկետով կամ մինչեւ 18 տարին լրանալը:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչպիսի տուգանքներ են նախատեսված արտադրական վտանգավոր օբյեկտը ռեեստրում գրանցման չներկայացնելու եւ տեխնիկական անվտանգության փորձաքննություն չանցկացնելու համար:

Իրինա Առաքելյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ արտադրական վտանգավոր օբյեկտը ռեեստրում գրանցման չներկայացնելն ու տեխնիկական անվտանգության փորձաքննություն չանցկացնելն առաջացնում են տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով (այսինքն՝ մեկ միլիոն դրամ):

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերը նախապես համաձայնեցվում են պետական հրդեհային հսկողության մարմինների հետ: Հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերով չսահմանված, հրդեհային անվտանգության ապահովման առանձին լուծումներ պահանջող հարցերի վերաբերյալ եզրակացություններ է տալիս պետական հրդեհային հսկողություն իրականացնող մարմինը (այն է՝ ՀՀ ԱԻՆ պետական հրդեհային եւ տեխնիկական անվտանգության տեսչությունը):

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը տեղեկացնում է, որ դպրոցական բաժանորդային համակարգի ծրագրին միացած թանգարանները, թատրոնները եւ համերգային կազմակերպությունները շարունակելու են աշակերտներին ընդունել 2022 թվականի տպագրված տոմսերով մինչեւ 2023 թվականի օգոստոսի 31-ը ներառյալ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	0 + 4 +14 + 18
Կոտայքի լեռներ	+ 1 + 4 +13 + 16
Կոտայքի նախալեռներ	+ 5 + 7 +16 +19
Գեղարքունիք	+ 1 + 5 +14 + 17
Լոռի	+ 2 + 6 +15 + 18
Տավուշ	+ 4 + 8 +19 + 21
Արագածոտնի լեռներ	0 + 3 +13 + 15
Արագածոտնի նախալեռներ	+ 5 + 8 +17 + 22

Մարզ	Ջերմաստիճան
Արարատ	+8 + 11 + 22+ 25
Արմավիր	+ 7 + 9 +22+ 25
Վայոց ձորի լեռներ	0 + 3 + 11 + 14
Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 12 +22 + 24
Սյունիքի հովիտներ	+ 8 + 11 +25 + 28
Սյունիքի նախալեռներ	+ 4 + 7 +17 + 20
Արցախ	+ 7 + 10 +21 + 25
Երեւան	+ 8 + 10 +21 + 23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **4.04.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*